

հրականության մեջ, Կանտ *բնութեան օրենք* մը (գերմ.՝ Naturgesetz, անգլ.՝ Natural Law) կը փնտռէր, որով կարելի ըլլար մեր բարոյական վարմունքները բնականօրէն վարել եւ գտաւ *անպայմանական հրամայականը*, որ իր կարգին *բարոյական օրենք* (Moral Law) մըն է, բնութեան (ինչպէս բնագիտութեան - Physics) զանազան օրենքներուն նման:

Կանտ, իր երկերուն մէջ, կը ներկայացնէ *անպայմանական հրամայականի* բանաձեւի զանազան տարբերակներ, որոնք մինչեւ այսօր բարդ քննարկումներու եւ տարակարծիք մեկնութիւններու նիւթ եղած են: Այս աշխատասիրութեան մէջ, ստորեւ, պիտի նշուին անոնցմէ հինգ կարեւոր բանաձեւերը միայն:

1. Ընդհանրականացման բանաձեւը

«Վարուէ՛ միայն այնպիսի անձնական կանոնով (մաքսիմ), որով միաժամանակ կարենաս ցանկալ, որ այդ՝ ընդհանուր օրենք դառնայ»:

Այս հանրածանօթ ու ամենաշատ օգտագործուած հիմնական բանաձեւին համաձայն, մենք պետք է վարուինք այնպիսի անձնական կանոններով (մաքսիմ), որոնցմով կարենանք ցանկալ, որ անոնք *ընդհանուր բարոյական օրենքներ* (Moral Law) դառնան: Այստեղ որոշ կարեւորութեամբ կը շեշտեմ *«ցանկալ կարենալ»* բառակապակցութիւնը, որովհետեւ մենք կրնանք անձնական կանոն (մաքսիմ) մը ցանկալ միայն այն ատեն, երբ զայն, որպէս *ընդհանուր օրենք*, առանց հակասութեան, կարելի ըլլայ մտածել եւ այս անձնական կանոնին (մաքսիմ) կամքը ինքնիրեն արգելք չհանդիսանայ:

Այս գաղափարը կարելի է *գողութեան օրինակով* աւելի յստակացնել.՝ նիւթական վիճակս բարելաւելու համար եթէ դրամատուն մը կողոպտեմ, ինչպէ՞ս արժեւորելու է այս վարմունքս: Կանտ համաձայն չէ, որ ես աստուածաշնչեան տասը պատուիրաններէն ութերորդին (*«Մի՛ գողնար»*, տե՛ս Էջ 390) հետեւիմ, որովհետեւ դիմած կ'ըլլամ արտաքին հեղինակութեան մը: Կանտ կը թելադրէ, որ այս անբարոյական վարմունքին արժեւորումը ի՛մ բանականութենէն բխի, հետեւեալ գործընթացով կամ ձեւով.՝

Ա.) նախ պետք է *անձնական կանոն* (մաքսիմ) մը կազմեմ, որ ինծի համար ի գորու ըլլայ իմ ամբողջ կեանքի ընթացքին: Վերոյիշեալ օրինակի պարագային, իմ անձնական կանոնը հետեւեալ տարազը կրնայ ունենալ.՝ *«ամէն անգամ, որ նիւթական վիճակս բարելաւել ուզեմ, դրամատուն մը կը կողոպտեմ»*.

Բ.) ապա պետք է այս *անձնական կանոնը* (մաքսիմը) ընդհանրականացնել փորձեմ եւ որպէս ընդհանուր օրենք ներկայացնեմ: Արդեօք կարելի՞ է երեւակայել նմանօրինակ օրենք մը, երբեւիցէ, որեւէ տեղ: Արդեօք ես պիտի ուզե՞մ, որ դրամատան մէջ պահ դրուած իմ նիւթական խնայողութիւնը ուրիշներու կողմէ կողոպտուի: Անշուշտ որ յիշեալ երկու հարցերուն բանականութեան պատասխանը *ոչ* պիտի ըլլայ...: